Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 499 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՈՒՏԻԶՄ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ»

1.	Ծրագրի նպատակը	Իրականացնել միջոցառումներ, սեմինարներ և վերապատրաստման այլ դասընթացներ աուտիզմ և զարգացման այլ խանգարումներ ունեցող անձանց հետ աշխատող մասնագետների որակավորումը բարձրացնելու համար: «Աուտիզմ ազգային հիմնադրամ»-ը հավատարիմ մնալով իր կանոնադրական սկզբունքներին 2024 թվականից սկսած իրականացնում է իրազեկման ծրագրեր՝ ընդգրկելով կրթական տարբեր հաստատություններ՝ սկսած նախադպրոցականից, մինչև բարձրագույն ուսումնական հաստատություններ և կրթօջախներ: Նպատակը մեկն է՝ ունենալ իրազեկ, կիրթ և ըմբռնող հասարակություն, որը բաց և աջակցող կլինի մեր կողքին ապրող բոլոր այն անձանց նկատմամբ, ովքեր այս կամ այն պատճառով ունեն որոշակի դժվարություններ լիարժեք ներգրավվելու և ապրելու մեր հասարակության մեջ՝ որպես լիիրավ անդամներ: Երևանում հունվար ամսից մինչ օրս իրականացվել է ավելի քան 17 այց՝ տարբեր կրթական հաստատություններ (մանկապարտեզ, քոլեջ, բուհ), ընդգրկելով 190-ից ավել մասնակից, տարբեր մասնագիտություններով և պաշտոններով: Իրազեկման ծրագրերը կրելու են շարունակական բնույթ: Աուտիզմ ազգային հիմնադրամը

		կազմակերպելու է իրազեկման միջոցառումներ, քննարկումներ, վերապատրաստումներ Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում և Երևան քաղաքում: Ծրագիրը նախատեսվում է իրակա-նացնել երկարաժամկետ: Կազմակերպվող հանդիպումների ժամանակ Աուտիզմ ազգային հիմնադրամի շահառուները, նրանց ընտանիքը կիսվելու են իրենց անձնական փորձով, դժվարությունները հաղթահարելու, չհուսահատվելու իրենց բանաձևով: Ծրագրի շրջանակներում նախատեսված քննարկումները կազմակերպվելու են ինչպես հիմնադրամի տարածքում այնպես էլ կրթական այլ հաստատություններում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	1) ԱՄՆ–ում գործող My Way Autism Fund for Armenia Inc հիմնադրամը (Հասցե՝ 3648 Fairesta Street, Glendale, CA, United States, California, ՀՎՀՀ՝ 85-3574590). 2) «Աուտիզմ ազգային հիմնադրամ» (Հասցե՝ քաղ. Երևան, Գյուրջյան փողոց 13, ՀՎՀՀ՝ 00877719):
4.	Ծրագիրը կատարողը	«Աուտիզմ ազգային հիմնադրամ» (Հասցե՝ քաղ. Երևան, Գյուրջյան փողոց 13, ՀՎՀՀ՝ 00877719)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, բնագավառը՝ կրթական
6.	Ծրագրի բյուջեն	36,000,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետությունում բնակվող հաշմանդամություն ունեցող անձինք, մասնավորապես աուտիզմ և զարգացման այլ խանգարումներ ունեցող անձինք՝ երեխաները, դեռահասները, չափահասները, նրանց ընտանիքների անդամները, ինչպես նաև իրազեկման միջոցառումներին, քննարկումներին, վերապատրաս-տումներին մասնակիցները:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի հուլիսի 15-ից մինչև 2034 թվականի հուլիսի 15-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) Աուտիզմ ազգային հիմնադրամը կազմակերպելու է իրազեկման միջոցառումներ, քննարկումներ, վերապատրաստումներ Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում և Երևան քաղաքում: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2024 թվականի հուլիսի 15-ից մինչև 2034 թվականի հուլիսի 15-ն ընկած ժամանակահատվածում՝ 16.100.000 դրամի չափով. 2) 2024 թվականի հուլիսի 15-ից մինչև 2024 թվականի հուլիսի 31-ն ընկած ժամանակահատվածում կենտրոնի շահառուների և աշխատակազմի անվնաս և ապահով տեղափոխումը կազմակերպելու նպատակով ձեռք է բերելու մեկ՝ 18 տեղանոց մարդատար մեքենա՝ 14.900.000 դրամի չափով: Ծրագրի ավարտից հետո մեքենան շարունակելու է ծառայել Աուտիզմ ազգային հիմնադրամի կողմից իրականացվող ծագրերի համար և պատկանելու է Աուտիզմ ազգային հիմնադրամին. 3) աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ նախատեսվում է իրականացնել 2024 թվականի հուլիսի 15-ից մինչև 2034 թվականի հուլիսի 15-ն ընկած ժամանակահատվածում տարեկան 500.000 դրամի չափով (10 տարվա համար՝ 5,000,000 դրամ):
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) մեկ՝ 18 տեղանոց մարդատար մեքենայի ձեռքբերում արժեքը՝ 14.900.000 դրամ. 2) աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ տարեկան 500.000 դրամ (10 տարվա համար՝ 5,000,000 դրամ):
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ տարեկան 500.000 դրամ (10 տարվա համար՝ 5,000,000 դրամ):
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման ժամանակ նախատեսվում է համագործակցություն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների, մարզպետների աշխատակազմերի, համայնքապետարանների, հասարակական կազմակերպությունների և անհատ բարերարների հետ:

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի արդյունավետության վերահսկողությունը կիրականացվի Աուտիզմ ազգային հիմնադրամի կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

15.07.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ